Հ Ր Ա Մ Ա Ն N 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«20» ՀՈՒՆՎԱՐԻ 2017 Թ. **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳԾՈՎ» 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման 11-րդ կետի 2-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1933-Ն որոշման 9-րդ կետի «գ» ենթակետը .

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Սահմանել՝

1) որ «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի «04. Փորձաքննությունների ծառայություններ» ծրագրով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը հատկացված միջոցների հաշվին դատական փորձաքննությունների ծառայությունները ձեռք են բերվում «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ստացված Հայաստանի Հանրապետության դատարանի (քրեական գործերով) կամ քրեական հետապնդման մարմնի՝ համապատասխան փորձաքննությունը նշանակելու մասին որոշումների հիման վրա.

2) որ փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը 2017 թվականի համարմ կազմում է 560 դրամ,

3) փորձաքննությունների ծառայությունների միավորի նախահաշվային արժեքը և ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների տեսակների՝ համաձայն սույն հրամանի հավելվածի,

4) որ 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը տվյալ ծրագրին հատկացումների ընդհանուր գումարի սահմաններում իրավասու է փոփոխելու սույն հրամանի հավելվածով սահմանված փորձաքննությունների ծառայությունների ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների առանձին տեսակների, եթե ըստ այդ տեսակների դատարանների կամ քրեական հետապնդման մարմինների կողմից նշանակված փորձաքննությունների փաստացի քանակը չի համապատասխանի սույն հրամանով հավելվածով նախատեսված տվյալներին:

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարի 2017 թվականի
հունվարի 20 -ի N 28-Ա հրամանի

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Փորձաքննության տեսակը	Միավորի նախահաշվային արժեքը (դրամ)	Քանակը (հատ)	Ընդամենը նախահաշվային արժեքը (հազ. դրամ)
Ձեռագրաբանական	25200	550	13860,0
Փաստաթղթաբանական, այդ թվում՝	33600	400	13440,0
- փաստաթղթի պատրաստման եղանակի և վավերապայմանների	33600	308	10348,8
- փաստաթղթի նյութի	33600	92	3091,2
Հետքաբանական, այդ թվում՝	25200	1001	25225,2
- մարդու կողմից թողնված հետքերի	25200	86	2167,2
- առարկաների, գործիքների հետքերի	25200	434	10936,8
- տրանսպորտային միջոցների հետքերի	25200	430	10836,0
- սառը զենքի	25200	51	1285,2
Ֆոտոտեխնիկական	50400	8	403,2
Դիմանկարային	50400	70	3528,0
Ձգաբանական, այդ թվում՝	33600	580	19488,0
- հրազենի և զինամթերքի	33600	309	10382,4
- կրակոցի հետքերի և արգասիքների	33600	271	9105,6
Պայթյունատեխնիկական, այդ թվում՝	50400	99	4989,6
- պայթուցիկ սարքավորումների և զինամթերքի	50400	54	2721,6
- պայթյունի հետքերի և արգասիքների	50400	45	2268,0
Նյութագիտական, այդ թվում՝	33600	1216	40857,6
- լաքաներկերի և ծածկույթների	33600	386	12969,6
- նավթամթերքների և քսայուղերի	33600	135	4536,0
- սպիրտ պարունակող հեղուկների	33600	153	5140,8
- ապակու, ապակենման նյութերի, սիլիկատային նյութերի	33600	11	369,6
- միներալների, բնական ու թանկարժեք	33600	150	5040,0

քարերի			
-պլաստմասսաների, ռետինի և այլ պոլիմերային նյութերի	33600	34	1142,4
-մետաղների և համաձուլվածքների	33600	192	6451,2
-այլ նյութերի	33600	155	5208,0
Կենսաբանական, այդ թվում՝	33600	700	23520,0
-բուսական ծագման օբյեկտների	33600	232	7795,2
-կենդանական ծագման օբյեկտների	33600	13	436,8
-թմրամիջոցների և հոգեմետ դեղամիջոցների	33600	335	11256,0
-մանրաթելերի ու գործվածքների	33600	90	3024,0
-հողագիտական	33600	30	1008,0
Սննդային	33600	4	134,4
Տեսաձայնագրառման, այդ թվում՝	67200	280	18816,0
-ձայնի և հնչած խոսքի	67200	105	7056,0
-ձայնագրվածքի ձայնային միջավայրի, պայմանների, միջոցների, նյութի և հետքերի	67200	104	6988,8
-տեսագրվածքի պատկերի, պայմանների, միջոցների, նյութի և հետքերի	67200	71	4771,2
Հրդեհատեխնիկական, այդ թվում՝	50400	140	7056,0
- հրդեհատեխնիկական	50400	115	5796,0
- էլեկտրատեխնիկական	50400	25	1260,0
Շինարարատեխնիկական, այդ թվում՝	33600	179	6014,4
-շինարարատեխնիկական	33600	155	5208,0
-անշարժ գույքի գնահատման	33600	24	806,4
Ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների	16800	400	6720,0
Տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի	50400	216	10889,0
Տրանսպորտային հետքաբանական	50400	80	4032,0
Տնտեսագիտական, այդ թվում՝	100800	185	18648,0
-հաշվապահական	100800	145	14616,0
-ֆինանսատնտեսագիտական	100800	40	4032,0
Ապրանքագիտական, այդ թվում՝	16800	911	15304,8
-ապրանքի գնահատման	16800	461	7744,8
-գույքային վնասի չափի որոշման	16800	450	7560,0
Համակարգչային-տեխնիկական	84000	34	2856,0
Ընդամենը		7053	235782,2